ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0057 Ա. 27.04.21

27 ապրիլի 2021 թվականի թիվ 57 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Մարտին Գալստյան**
2021 թվական ապրիլի 27
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման վերաբերյալ[1]

Մակրոտնտեսական միջավայր[2]**.** Կորոնավիրուսային համավարակով ուղեկցվող 2020 թվականը, համաշխարհային տնտեսության և Հայաստանի համար հատկապես, բարդ մարտահրավերներով լի տարի էր: Համավարակի հետևանքների հետ մեկտեղ, Հայաստանի տնտեսական զարգացումները պայմանավորված էին նաև աշխարհաքաղաքական մի շարք խնդիրների, ռազմական դրության սոցիալ-տնտեսական հետևանքների և դրանցից ածանցվող մարտահրավերների բացասական ազդեցության դրսևորմամբ: Արդյունքում, մի կողմից՝ տարեսկզբին ներդրված մի շարք տնտեսական սահմանափակումների, մյուս կողմից՝ ձևավորված զգալի տնտեսական անորոշությունների ներքո **2020թ-ին Հայաստանի տնտեսությունում արձանագրվեց 7.6 տոկոս անկում:** Տնտեսական անկումը դրսևորվեց տնտեսության բոլոր ճյուղերում, թեև ամենամեծ չափով տուժեցին առևտրի և ծառայությունների ոլորտները: Սա արտահայտում էր նաև համախառն պահանջարկի դանդաղումը՝ պայմանավորված համավարակի հաղթահարման հեռանկարների և տնտեսաքաղաքական անորոշությունների ներքո մասնավոր սպառման և ներդրումների հետաձգման վարքագծային դրսևորումներով:

Համախառն թույլ պահանջարկի պայմաններում արտահանման նկատմամբ ներմուծման ավելի մեծ նվազման շնորհիվ 2020 թվականին արտաքին հատվածի դիրքը նախորդ տարվա նկատմամբ էականորեն բարելավվել է: Թեև համաշխարհային մակարդակով կիրառված սահմանափակումների պայմաններում զգալիորեն նվազել են զբոսաշրջային ծառայությունների արտահանումը և ներմուծումը, այդ ոլորտի զուտ ազդեցությունը արտաքին հաշվեկշռի վրա եղել է հիմնականում չեզոք: Սրան զուգահեռ արտագնա աշխատողների դրամական փոխանցումների էական կրճատումը մեծամասամբ փոխհատուցվել է մասնավոր տրանսֆերտների զգալի աճով: Արդյունքում, **2020 թվականի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ էականորեն բարելավվել է և կազմել ՀՆԱ 3.1%-ը** (նախորդ տարվա 7.2%-ի դիմաց):

Տնտեսական ակտիվության զգալի անկման և համախառն թույլ պահանջարկի պայմաններում, **Հայաստանում ցածր գնաճային միջավայրը, որոշակի**

---

[1] ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության վերաբերյալ եզրակացության կազմման շրջանակներում առաջնորդվում է բյուջեի կատարողականի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության ու դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:

[2] Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները և գնահատականները վերցված են ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունից:

տատանողականությամբ, պահպանվել է մինչև նոյեմբեր ամիս: Տարեվերջին, համաշխարհային տնտեսական ակտիվության և արտաքին պահանջարկի վերականգնման սպասումների ներքո՝ միջազգային ապրանքահումքային և պարենային շուկաներում էական գնաճային զարգացումների պայմաններում Հայաստան ներմուծվող մի շարք պարենային ապրանքների շուկաներում ևս դիտարկվեցին գների աճ: Վերջինիս, ինչպես նաև տնտեսությունում ռիսկերի աճի հետևանքով դրամի արժեզրկմամբ պայմանավորված գնաճային դրսևորումների արդյունքում, **2020 թվականի վերջին 12-ամսյա գնաճը մոտեցավ ԿԲ նպատակային ցուցանիշին՝ կազմելով 3.7%:**

Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում նույնպես, **հարկաբյուջետային քաղաքականությունը 2020թ-ին հիմնական ջանքերն ուղղել է տնտեսական անկմանը հակազդելու և հակացիկլիկ քաղաքականության իրականացման վրա՝ ավելացնելով բյուջեի պակասուրդը և զգալի դրական հարկաբյուջետային ազդակ հաղորդելով տնտեսությանը և աշխատուժի շուկային**: Ստեղծված իրավիճակում հարկաբյուջետային կանոններով նախատեսված բացառիկ դեպքի[3] կիրարկման արդյունքում նաև ՀՀ կառավարության պարտքի բեռը ՀՆԱ-ի նկատմամբ էապես աճել է՝ հատելով կանոններով սահմանված 60% սահմանային շեմը:

Տարվա ընթացքում պահպանվող թույլ համախառն պահանջարկի վերականգնմանը նպաստելու նպատակով **ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է վարել խթանող դրամավարկային քաղաքականություն**: Ընդ որում, մինչև դեկտեմբեր ավելացրել է խթանման չափը՝ աստիճանաբար իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով: Դեկտեմբերին, հաշվի առնելով միջազգային պարենային շուկաներում գների աճով և փոխարժեքի արժեզրկումով պայմանավորված գնաճի և գնաճային սպասումների կանխատեսվող արագացումը, ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.0 տոկոսային կետով՝ սահմանելով 5.25%: Միևնույն ժամանակ, վերջին տարիների ընթացքում շարունակական իրականացված դրամավարկարկային ընդլայնող քաղաքականության ազդեցությունն արտացոլվել է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների և տնտեսությանը տրամադրվող վարկերի տոկոսադրույքների նվազման միտումներում: Արդյունքում, 2020թ-ին ԿԲ-ի **հետևողական դրամավարկային քաղաքականության իրականացմամբ հնարավոր է եղել ապահովել գնաճի կայուն ցածր մակարդակ**՝ միաժամանակ նպաստելով համախառն պահանջարկի վերականգնմանը և ամրագրելով ընդհանուր մակրոտնտեսական կայունությունը:

Այսպիսով, **տարվա ընթացքում իրականացված ընդլայնող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները նպաստել են համախառն**

---

[3] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդվածի 8⍰3-րդ մաս

պահանջարկի անկման տեմպերի որոշակի մեղմմանը, ինչպես նաև գների կայունության և աշխատուժի շուկայում կայուն զբաղվածության ապահովմանը:

Հարկաբյուջետային քաղաքականություն. Տնտեսական անկմանը հակազդելու, ռազմական դրությամբ պայմանավորված ծախսերի և տնտեսական օժանդակության ծրագրերի իրականացման հրամայականի ներքո, 2020թ-ին հարկաբյուջետային քաղաքականության ընթացքը պայմանավորված էր Կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեի ծրագրի վերանայումներով ուղեկցվող զգալի խթանող քաղաքականության իրականացմամբ: **Հարկաբյուջետային միջոցառումներն, ընդհանուր առմամբ, բաղկացած են եղել համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրերի փաթեթից, հարկային բարեփոխումներից և առողջապահական ու ռազմական ծախսերի ընդլայնումից** (միջոցառումների ընդհանուր չափը 2020 թվականին կազմել է 164.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.7%-ը): Այդուհանդերձ, 2020 թվականին **սոցիալ-տնտեսական օժանդակության, այդ թվում՝ հատկապես երկարաժամկետ տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերը ամբողջ ծավալով չեն իրականացվել,** և արդյունքում, Կառավարության հակաճգնաժամային ազդեցության չափը 2020թ. ՀՆԱ վրա 0.8 տոկոսային կետով ցածր է եղել նախատեսվածից:

Համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունն է ունեցել հարկային եկամուտների վրա: Հարկային եկամուտները նախորդ տարվա նկատմամբ նվազել են, սակայն հարկային եկամուտների՝ վերանայված ծրագրով նախատեսված ցուցանիշն ապահովվել է: Կարևոր է նաև արձանագրել, որ հարկային եկամուտների նվազումը պայմանավորվել է նաև հաշվետու տարվա երկրորդ եռամսյակում իրականացված շահութահարկի գծով հիմնարար փոփոխություններով[4]: Վերջինս, թեև առաջին հերթին նպատակ ուներ շահութահարկի կարգավորումները համապատասխանեցնել ընթացիկ տնտեսական զարգացումներին և օժանդակել շահութահարկ վճարող տնտեսվարողների շրջանառու ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրների լուծմանը, սակայն այս համատեքստում **ԿԲ-ի կողմից հատկապես կարևորվում է երկարաժամկետ հիմնարար կարգավորումների տեսանկյունից շահութահարկի կանխավճարների համակարգի օրենսդրական փոփոխությունը:**

Արդյունքում, 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նկատմամբ նվազել են 0.3%-ով, իսկ հարկերը և տուրքերը՝ 5.4%-ով:

---

[4] Մասնավորապես, շահութահարկի կանխավճարների համակարգի օրենսդրական փոփոխության համաձայն, շահութահարկի կանխավճարների համակարգի վերանայմանը զուգահեռ 2020 թվականի երկրորդ եռամսյակի համար չեղարկվեց տնտեսվարող սուբյեկտների կողմից շահութահարկի կանխավճարներ վճարելու պարտավորությունը:

Ընդ որում, անվանական ՀՆԱ-ի՝ հարկերի անվանական մեծության նկատմամբ ավելի մեծ նվազման հետևանքով հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 0.1 տոկոսային կետով գերազանցել է 2019 թվականի համապատասխան ցուցանիշը և 0.2 տոկոսային կետով պակաս է եղել 2020 թվականի համար կանխատեսված ցուցանիշից:

Հարկ է նշել, որ 2020 թվականի հարկային վերանայումների, մասնավորապես շահութահարկի գծով օրենսդրական կարգավորումների իրականացումը և դրա շարունակականության ապահովումը էապես **կարևորվում է հարկային բեռի վերաբաշխման և տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից՝ կայուն հիմքեր ստեղծելով երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար:**

Առաջնորդվելով հակաճգնաժամային ծրագրերի առաջնահերթ իրականացման սկզբունքով, տարվա ընթացքում Կառավարությունը վերանայել է պետական բյուջեի ծախսերի ծրագիրը՝ որոշ ծախսերի գծով վերաբաշխումների իրականացման և ծախսերի ընդհանուր մակարդակի ավելացման ուղղությամբ: Արդյունքում, հաշվի առնելով նաև վերոնշյալ փոփոխությունները, 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 16.3%-ով՝ հիմնականում պայմանավորված կորոնավիրուսի համավարակի և ռազմական դրության հետ կապված՝ սոցիալական նպաստների, այլ ծախսերի, դրամաշնորհների և ոչ ֆինանսական ակտիվների գծով, ինչպես նաև կենսաթոշակների գծով ծախսերի աճով: **Աջակցության ծրագրերի իրականացման քաղաքականության ներքո՝ պետական բյուջեի ծախսերի կատարումն ուղեկցվել է հարկաբյուջետային կանոններով նախատեսված բացառիկ դեպքի կիրառմամբ,** որի պարագայում մասնավորապես՝ բյուջեի պակասուրդը եղել է ավելի մեծ, քան կապիտալ ծախսերն են, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը:

Ճգնաժամով ուղեկցվող ՀՆԱ-ի անվանական մեծության անկման և հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի աճի պայմաններում, 2020թ-ին 5.8 տոկոսային կետով աճել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցությունը՝ կազմելով ՀՆԱ-ի 30.6%-ը: Ընդ որում, ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում աճել է 5.1 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերի կշիռն աճել է 0.7 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ-ի 3.7%-ը՝ մեծամասամբ պայմանավորված պաշտպանության ոլորտի ծախսերի ավելացմամբ: Արդյունքում, **պետական բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա ունեցել են զգալի ընդլայնող ազդեցություն, թեև կապիտալ ծախսերի ծավալների և արդյունավետության բարձրացումը շարունակել է խնդրահարույց լինել տնտեսական ներուժի պահպանմանն ու ընդլայնմանն ուղղված երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից**: Այս առումով, ԿԲ-ը կարևորում է Հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրման ու հետագա կատարելագործման ուղղությամբ քայլերի իրականացումը՝ որպես երկարաժամկետ

հատվածում կապիտալ ծախսերի տնտեսական արդյունավետության բարձրացման գործոնի:

Այսպիսով, **ԿԲ-ը արդարացված է համարում ստեղծված տնտեսական իրավիճակում հարկաբյուջետային կանոնով նախատեսված բացառիկ դեպքի շրջանակներում պետական ծախսերի մասով հակացիկլիկ քաղաքականության իրականացումը, և միաժամանակ մատնանշում հարկաբյուջետային քաղաքականության համապատասխան ծախսային ռազմավարության որդեգրման անհրաժեշտությունը՝ ուղղված երկարաժամկետ ներուժային աճի համար ամուր հիմքերի ձևավորմանը:**

2020 թվականին տնտեսական ակտիվության նվազման, ինչպես նաև հարկային եկամուտների նվազման և պետական ծախսերի աճի պայմաններում, հակաճգնաժամային միջոցառումների ֆինանսավորումը Կառավարության կողմից իրականացվել է պետական պարտքի՝ կանխատեսվածից զգալի ավել ծավալների ներգրավմամբ: Իրականացված հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում պետական բյուջեի պակասուրդը աճել է՝ հասնելով ՀՆԱ-ի 5.4%-ի: Արդյունքում, ՀՀ կառավարության պարտքի բեռը ՀՆԱ-ի նկատմամբ էապես՝ 13.5 տոկոսային կետով ավելացել է և կազմել 63.5 տոկոս՝ հատելով հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը: Ընդ որում, 2020 թվականի պետական պարտքի կառուցվածքում շարունակվել է ներքին աղբյուրների տեսակարար կշռի աճի՝ վերջին տարիներին արձանագրված միտումների պահպանումը: Հատկանշական է, որ Կառավարության պարտքի նման աճի պայմաններում ներքին պարտքի տեսակարար կշռի աճն ուղեկցվել է տոկոսադրույքների նվազմամբ, ինչին, ի թվիս այլ գործոնների, նպաստել է նաև տարվա ընթացքում դրամավարկային ընդլայնող քաղաքականության իրականացումը:

Հաշվի առնելով հաշվետու տարվա մարտահրավերների առաջնահերթությունը, սակայն, կարևոր համարելով նաև միջնաժամկետ պարտքի կայունության նպատակի անվերապահ իրագործման անհրաժեշտությունը՝ **առանցքային նշանակություն ունի Կառավարության կողմից պարտքի նվազեցմանն ու կայունացմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը,** այդ թվում՝ առաջիկա տարիներին պարտքը թույլատրելի սահմանում վերադարձնելու՝ Կառավարության կողմից հաշվետվությունում նախանշված միջոցառումների իրականացումը:

Այսպիսով, շահութահարկի գծով հարկային վերանայումներով և պետական բյուջեի ծախսերի ավելացմամբ ուղեկցվող հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում, 2020 թվականին **հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է էական խթանող ազդեցություն համախառն պահանջարկի վրա, և հարկաբյուջետային ազդակը կազմել է 5.0:** Վերջինիս նշանակությունը կարևորվել է հատկապես տնտեսության առավել տուժած ճյուղերի

ներուժի, այդ ճյուղերում զբաղվածության և տնտեսական հեռանկարների պահպանման, ինչպես նաև ընդհանուր մակրոտնտեսական միջավայրի կայունության տեսանկյունից:

Ամփոփում. Ամփոփելով փաստենք, որ 2020 թվականի հարկաբյուջետային և դրամավարկային ընդլայնող քաղաքականությունների արդյունավետ համադրման շնորհիվ ՀՀ-ում **հնարավոր է եղել ապահովել մակրոտնտեսական կայունությունը,** ինչը չափազանց կարևոր ձեռքբերում է՝ հաշվի առնելով տարվա մարտահրավերները և դրանց ազդեցության չափերը: Միևնույն ժամանակ, հարկաբյուջետային քաղաքականությունը, ինչպես և ամբողջ աշխարհում, արագ արձագանքելով համավարակի հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, իրականացվել է պարտքի զգալի ավելացման ճանապարհով՝ շեղվելով միջնաժամկետ և երկարաժամկետ նախանշված ծրագրերից: Չնայած տնտեսական աջակցության ծրագրերի արդյունավետության վերաբերյալ հստակ գնահատականների դեռևս բացակայությանը՝ **ԿԲ-ը կարևորում է ստեղծված տնտեսական իրավիճակում հարկաբյուջետային հակացիկլիկ քաղաքականության որդեգրումը, սակայն խնդրահարույց է համարում օժանդակության միջոցառումների մասնակի և ոչ ամբողջ ծավալով իրականացումը:** Միաժամանակ, այս համատեքստում, **ԿԲ-ը առանցքային է համարում** առաջիկա տարիներին հարկաբյուջետային կարգավորումների շարունակական իրականացման միջոցով **միջնաժամկետ պարտքի կայունության նպատակի հստակ ամրագրումը**, ինչպես նաև **համապատասխան ծախսային ռազմավարության ներքո՝ տնտեսության կայուն զարգացման հիմքերի ամրապնդումը:**